

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ



### Մարզում ավելացել են մշակովի հողատարածքները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մեկնել է Լոռի մարզում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին հետևելու նպատակով:

Այցը մեկնարկել է Սպիտակ քաղաքից, որտեղ նախարարը, մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ, եղել է «Սպիտակ» հասարակական կազմակերպության հիմնած շերտնոցային տնտեսությունում, որն ընդգրկում է 2000 քմ տարածք: Այստեղ վարունգի մշակության փորձնական ծրագիր է իրականացվում, որի շնորհիվ թվով 10 հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիր է լուծվել, ստացված բերքն իրացնում են տեղական շուկայում, ոռոգումը կաթիլային եղանակով են կատարում: Աշխատողների խոսքով՝ մշակության ընթացքում որոշակի խնդիրներ է առաջացրել լվիճը, սակայն ԳԱՄԿ-ի մասնագետի օգնությամբ, վնասատուի դեմ միջոցներ են ձեռնարկվել, և կանխվել է բերքի կորուստը: Նախարարն, իր հերթին, նշել է, որ անհրաժեշտության դեպքում կարող են լրացուցիչ մասնագետներ ներգրավել՝ խորհրդատվություն տրամադրելու համար: Ջերմոցային տնտեսության հարևանությամբ, շուրջ 2 հեկտար տարածքի վրա, հիմնել են խնձորի նորատունկ այգիներ: Մշակությունը դարձյալ կաթիլային ոռոգման համակարգի կիրառմամբ է իրականացվում, նախատեսվում է նաև հակակարկտային ցանց ներդնել: Այնուհետև նախարարն ուղևորվել է Մեծ Պարսի, որը մարզի այն ութ համայնքներից մեկն է, որտեղ գյուղատնտեսության զարգացման համար կարևորագույն խնդիրներ են լուծվել՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի միջոցներով: Մասնավորապես՝ մարզի գյուղական համայնքներում, ընդհանուր առմամբ, կառուցվել է շուրջ 7.5 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրվել է 35 խմոց, ջրարբիացվել են նախկինում թերի կամ չջրարբիացված շուրջ 12 350 հա արոտներ, ինչպես նաև տրամադրվել է 45 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 11 տրակտոր:

Է 2

### Առատ բերքի ակնկալիքով

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մեկնել է Արագածոտնի մարզ՝ գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին հետևելու նպատակով:

Մարզպետ Սարգիս Սահակյանի ուղեկցությամբ, նախարարն այցելել է Բազմադրյուր և Կարբի համայնքներում գտնվող «Վարգա ֆուր» և «Կարբի ֆրուտ» նորաբաց ընկերություններ, որոնք զբաղվում են պտուղ-բանջարեղենի պահածոյացմամբ և չրերի արտադրությամբ: «Վարգա ֆուր» տնօրեն Գագիկ Հարությունյանը տեղեկացրել է, որ ընկերությունը վերջերս է հիմնադրվել, այժմ ունի 40 աշխատատեղ և առկա են նախադրյալներ՝ գործունեությունն ընդլայնելու համար: Նախատեսվում է պատրաստի արտադրանքն արտահանել ռուսական շուկա: Այս պահին արդեն իսկ մթերել են կեռաս և ազնվամորի, ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում նախատեսում են մթերել ավելի քան 150.0 տոննա պտուղբանջարեղեն: «Կարբի ֆրուտի» տնօրենի խոսքով՝ ընկերությունը նախորդ տարի է ստեղծվել, և իրենց արտադրանքը նախատեսում են մասամբ իրացնել տեղական, և մասամբ էլ՝ ռուսաստանյան շուկայում:

Ողջունելով նոր վերամշակող ընկերություններ ստեղծելու նախաձեռնությունները՝ նախարարը վստահություն է հայտնել, որ ընկերությունների հիմնումը թույլ կտա լուծել գյուղացիների բերքի իրացման խնդիրը՝ միաժամանակ նպաստելով տեղական արտադրության ծավալների ավելացմանը: Այցի ընթացքում նախարար Սերգո Կարապետյանը եղավ նաև Կարբի համայնքի խնձորի այգիներում, որտեղ այգետերերը հավաստիացրեցին, որ նախորդ տարվա համեմատ, այս տարի ավելի առատ բերք են ակնկալում: Գյուղացիները նախարարի հետ զրույցում կարևորել են ոռոգման ջրի, ինչպես նաև՝ բուժանյութերի որակի ապահովման հարցերը: Նախարարը հանձնարարել է մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրենին՝ նախարարության միջոցներով ապահովել բուժանյութերի լաբորատոր փորձաքննությունը:

Է 2

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Յուրի Կերասիմյանն աշխատանքային այցով եղել է Վայոց ձորի մարզում, այցելել արտադրական ձեռնարկություններ, ծանոթացել համայնքներում իրականացված և ընթացքի մեջ գտնվող տարբեր ենթակառուցվածքային ծրագրերին: Կառավարության ղեկավարի առաջին կանգառը՝ Արենի համայնքում գործող «Հին Արենի» գինու գործարանն էր: Տեղեկացվել է, որ գործարանը վերջին երկու տարիների ընթացքում իրականացրել է շուրջ 3,5 միլիոն դոլարի ներդրում, ինչի արդյունքում այն համալրվել է ֆրանսիական և իտալական բարձրակարգ սարքավորումներով: Ընթացիկ տարում գործարանը կարտադրի 120 հազար շիշ բարձրորակ գինի, իսկ հաջորդ տարի այդ թիվը նախատեսվում է հասցնել 250 հազարի: Ծրագրվում է գինիների հիմնական մասն արտահանել Կանադա, ԱՄՆ, ապագայում նաև՝ Եվրոպա: Ձեռնարկությունը պատրաստվում է ընթացիկ տարում մթերել շուրջ 280 տոննա խաղող:

Այնուհետև վարչապետն այցելել է Գետափ, Մալիշկա, Չառիթափ և Գլածոր համայնքներ, զրուցել տեղի բնակիչների հետ, ծանոթացել առկա խնդիրներին, գյուղատնտեսական աշխատանքների և ենթակառուցվածքային ծրագրերի ընթացքին: Մասնավորապես, Գետափ համայնքում՝ «Գյուղական կարողությունների զարգացման ծրագրով», ավարտին են մոտենում 8,5 կմ երկարությամբ գազի գծի կառուցման աշխատանքները, ինչի արդյունքում համայնքը 100 տոկոսով կգազիֆիկացվի: Ծրագրի իրականացման համար ներդրվել է 96 մլն դրամ: Համայնքի բնակիչները շնորհակալություն են հայտնել վարչապետին՝ ինչպես գազիֆիկացման աշխատանքների, այնպես էլ՝ ոռոգման և խմելու ջրագծերի կառուցմանն օժանդակելու, մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները կառավարության ֆինանսավորմամբ իրականացնելու համար:

Մալիշկա և Չառիթափ համայնքներում նույնպես վարչապետը ծանոթացել է գազատարի կառուցման, ճանապարհահատվածի հիմնանորոգման, ջրագծի կառուցման աշխատանքներին:

Չառիթափիցիները տեղեկացրել են, որ 60 գյուղացիական տնտեսություններ միավորվել և ստեղծել են գյուղատնտեսական կոոպերացիա, սակայն ունեն որոշակի ֆինանսական խնդիրներ: Վարչապետը ողջունել է նախաձեռնությունը և խոստացել հարցին դրական լուծում տալ:

Գլածոր համայնքում ջրագծի կառուցման աշխատանքները սկսվել են ընթացիկ տարվա հուլիսից և նախատեսվում է ավարտին հասցնել հաջորդ տարվա հուլիսին: Ծրագրի իրականացման համար համայնքը կներդնի 30,8 մլն դրամ, իսկ «Գյուղական կարողությունների զարգացման ծրագրով» կհատկացվի 378 մլն դրամ: Ծրագրով վերակառուցվում է նաև խմելու ջրի ամբողջ ներքին և արտաքին ցանցը: Այնուհետև վարչապետն այցելել է Եղեգնաձորի պահածոների գործարան, որը սկսել է գործել ընթացիկ տարվա հունիսից: Կառավարության ղեկավարին տեղեկացվել է, որ գործարանն արդեն իսկ արտադրել է տարբեր տեսակի մթերքներից պատրաստված 270 հազար սպառողական տարա: Արտադրանքը նախատեսվում է իրացնել՝ ինչպես հանրապետությունում, այնպես էլ՝ արտերկրում: Գործարանում ստեղծվել է 240 աշխատատեղ: Մինչ այժմ պահածոների գործարանը մթերել է 200 տոննա պտուղ-բանջարեղեն:

Է 2

Արտադրամասում ներդրվել են նոր տեխնոլոգիաներ	Էջ 3
Մասնագետի խորհուրդ	Էջ 5
Նախորդությունները հուսադրող են	Էջ 6

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ**

**Մարզում ավելացել են մշակովի հողատարածքները**

1

Սերգո Կարապետյանն, անդրադառնալով կատարված աշխատանքներին, հատկապես կարևորել է բարձր որակի ապահովման հարցը՝ շեշտելով, որ մեծածավալ ներդրումներ են կատարվել, և անհրաժեշտ է, որպեսզի դրանք արդյունավետ ծախսվեն և ծառայեն երկարաժամկետ հատվածի համար խնդիրների լուծմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրում, որն այս տարի է մեկնարկել, նախատեսվում է ևս 11 համայնք ընդգրկել, 5-ում արդեն նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում: Նախարարը եղել է նաև Մեծ Պարսի համայնքի ցորենի ցանքատարածություններում, հետևել բերքահավաքի ընթացքին, ինչպես նա դիտարկել է կարտոֆիլի դաշտերը: Նախարարի խոսքով՝ այս տարի Լոռու մարզում բավականաչափ ավելացել են մշակովի հողատարածքները, ընդհանուր առմամբ, նախորդ տարվանից շուրջ 3153 հեկտարից ավելի հող է մշակվել, շուրջ 1885 հեկտարով ավելացել են հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի, 362 հեկտարով՝ կարտոֆիլի, 671 հեկտարով՝ կերային մշակաբույսերի և 116 հեկտարով՝ բանջարեղենի ցանքատարածությունները, համապատասխանաբար ակնկալվում է նաև համախառն բերքի արտադրության ծավալների աճ: «Գյուղատնտեսական տարին բարեհաջող էր, և հատկապես գյուղմթերքի արտահանումների ծավալների աճ ենք արձանագրում, որը զգալիորեն գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը: Հույս ունեմ, որ տարեվերջի ցուցանիշները մենք կկապենք 2014 թվականի նկատմամբ արտահանման ծավալների կրկնապատկումով», - լրագրողների հետ ճեպագրույցում նշել է Ս. Կարապետյանը:

Նախարարի այցի վերջին կանգառը Միխայիլովկա համայնքն էր, որտեղ հետևել է ցորենի բերքահավաքի ընթացքին, գրուցել գյուղացիների հետ. այստեղ ցանքը կատարվել է պետական աջակցության ծրագրերի շրջանակում տրամադրված էլիտային սերմնացուներով և, անգամ անջրդի պայմաններում, ակնկալվում է հեկտարից մինչև 55 ցենտներ բերք ստանալ:

1

**Առատ բերքի ակնկալիքով**

Այնուհետև նախարարն ուղևորվել է Հնաբերդ համայնք՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC) ծրագրի իրականացման աշխատանքներին հետևելու նպատակով: Նախարարին տեղեկացրել են, որ Հնաբերդ համայնքում հիմնվել է գյուղատնտեսական կոոպերատիվ, որին անդամակցում է 151 ֆերմեր: Ողջունելով այս նախաձեռնությունը՝ նախարարն առանձնահատուկ կարևորել է կոոպերատիվների բոլոր անդամների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում՝ աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու հարցում: «Գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնումն ու զարգացումը մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գրավական է, և պետությունը պատրաստ է իր կողմից աջակցություն ցուցաբերել գյուղացիներին՝ միավորման և կոոպերատիվների ստեղծման խնդրում», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ծրագրում ևս 12 համայնք ընդգրկել: Ծրագրի շրջանակում մարզի 11 համայնքի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական



կոոպերատիվներին տրամադրվել է 132 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 26 միավոր տրակտոր: «Մարզում այս տարի բավականին լուրջ առաջընթաց է գրանցվել, միայն 2350 հեկտարով ավելացել են հացահատիկի ցանքատարածությունները, ընդհանուր առմամբ, շուրջ 2750 հեկտար ավել հող է մշակվել. նախորդ տարվա համեմատ, բերքատվությունը բավականին բարձր է», - ամփոփելով այցի արդյունքները՝ լրագրողների հետ զրույցում նշել է նախարար Կարապետյանը:

Նախարարը նաև հավելել է, որ այժմ հիմնական խնդիրը՝ մթերումների գործընթացի սահուն կազմակերպումն է: Արդեն սկսվել է լոլիկի մթերումը, և պետությունը պատրաստակամ է օժանդակել վերամշակող ընկերություններին՝ մթերման աշխատանքների կազմակերպման հարցում: 2

Այցի ավարտին նախարարը եղել է նաև համայնքի ցորենի ցանքատարածություններում, որտեղ բերքահավաքի աշխատանքներ են իրականացվում: Գյուղացիների հավաստմամբ, անգամ անջրդի տարածքից ակնկալվում են շուրջ 33-40 g/ հա բերք ստանալ:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

1

Առաջիկայում այդ թիվը նախատեսվում է հասցնել 900-1000 տոննայի: Վայոց ձորի մարզ կատարած այցը վարչապետը եզրափակել է մարզպետարանում անցկացված խորհրդակցությամբ, որին մասնակցել են համայնքների ղեկավարներն ու խաղող մթերող և վերամշակող ընկերությունների ներկայացուցիչները: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են բերքի մթերման կազմակերպչական հարցեր: Վարչապետը նշել է, որ ընթացիկ տարում համարպետությունում առկա է խաղողի առատ բերք: Կարևորել է արտադրողների ու մթերող կազմակերպությունների կողմից մթերման աշխատանքները կազմակերպված իրականացնելու հարցը: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը մեծ կարևորություն է տալիս գինեգործության զարգացմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը զեկուցել է, որ Վայոց ձորի մարզում այս տարի ակնկալվում է մթերել 4900 տոննա խաղող, որը կիրացնեն 15-20 վերամշակող ընկերություններ:

**ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Քննարկվել են խաղողագործության զարգացման հարցերը**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի գլխավորությամբ, հրավիրվել էր խորհրդակցություն՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ հանրապետությունում խաղողագործության զարգացման հարցերը քննարկելու նպատակով:

Հանդիպմանը մասնակցել են գյուղատնտեսության նախարարի տեղակալներ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտնականներ, գիտական կազմակերպությունների մասնագետներ և ընկերությունների ղեկավարներ:

Նախարարը տեղեկացրել է ներկաներին, որ հաշվի առնելով ոլորտի ընթացիկ զարգացումները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել խաղողագործության զարգացման ռազմավարությունը, որը հնարավորություն կտա ապահովել խաղողագործության ճյուղի հետագա կայուն զարգացումը:

«Խաղողագործության զարգացումը մեր երկրի տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունի, և մենք պետք է համախմբենք հանրապետության ողջ մասնագիտական ներուժն այս ուղղությամբ համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար», - նշել է նախարար Կարապետյանը:

Նախարարը հավելել է, որ այդ նպատակով ստեղծվելու է աշխատանքային խումբ, որը ֆինդեստրա վնասատուի առկայության պայմաններում, կզբաղվի խաղողագործության ռազմավարության մշակմամբ, որում ներգրավված կլինեն նաև միջազգային փորձագետներ:

Ռազմավարությունը պետք է ընդգրկի ոլորտի զարգացման 10 տարիների տեսլականը՝ ներկայացնելով ըստ քայլերի հաջորդականության իրականացվելիք միջոցառումները՝ պետական խիստ վերահսկողության ներքո:

Նախարարը հատկապես կարևորել է՝ կոնյակագործության, գինեգործության և սեղանի սորտերի դասակարգման, գյուղացիական տնտեսություններին ֆինդեստրա գերծ տնկիներով ապահովելու հարցերը: Պետության ուշադրության կենտրոնում է գտնվում խաղողի գենետիկական հայկական սորտերի պահպանման խնդիրը: Այդ նպատակով առաջիկայում մոտ 5 հեկտար տարածության վրա կստեղծվի խաղողի կուլեցիոն այգի, որտեղ կպահպանվի խաղողի հայկական սորտերի գենոֆոնդը:

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

**Քայլեր՝ ֆինդեստրայի դեմ պայքարելու համար**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ընդունել է Հունգարիայի Պաննոնիա համալսարանի պրոֆեսոր Լասլո Կոչիշին, ով Հայաստան է ժամանել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հրավերով՝ «Խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանումը և կայուն օգտագործումը Հայաստանում» ծրագրի շրջանակում:

«Խաղողագործության զարգացումը մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի հեռանկարային ճյուղերից է, ուստի հարկավոր է միջոցներ ձեռնարկել ֆինդեստրայի դեմ արդյունավետ պայքարի և այդ վնասատուի հետագա տարածումը կանխելու համար: Համոզված եմ, որ որպես ոլորտի բարձրակարգ և հմուտ մասնագետ, Ձեր փորձառությամբ կարող եք մեծ աջակցություն ցուցաբերել խնդրի լուծման հարցում», - ողջունելով հյուրին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:



Շնորհակալություն հայտնելով նախարարին ջերմ ընդունելության համար՝ Լասլո Կոչիշը նշել է, որ նախկինում արդեն այցելել է Հայաստան՝ խաղողի այգիներում ֆինդեստրայի մոնիթորինգի իրականացման և հայ մասնագետներին խորհրդատվություն տրամադրելու և ուսուցում իրականացնելու նպատակով: Իր խոսքում պրոֆեսորը նաև հավելել է, որ խաղողի ֆինդեստրան տարածված է աշխարհի բոլոր երկրներում, և այժմ ամենուր այդ վնասատուի դեմ պայքար է տարվում: Հանդիպման ընթացքում պրոֆեսոր Կոչիշը նախարարին մանրամասն ներկայացրել է իր ուսումնասիրությունների արդյունքները, համաձայն որոնց՝ անհրաժեշտ է արգելել վարակված երկրներից արմատակալների ներմուծումը, կիրառել միայն ֆինդեստրա-զերծ սորտեր, որոնց արտադրությունը պետք է կազմակերպել հանրապետությունում՝ պետական խիստ վերահսկողության ներքո: Կարևորվեց նաև՝ համապատասխան մասնագետների միջոցով, ֆինդեստրայի կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը հայ խաղողագործների շրջանում: Հանդիպման շրջանակում անդրադարձ եղավ նաև ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից հաստատված ծրագրով՝ խաղողի կուլեցիոն այգիների հիմնման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՏԱԴՐԱՄԱՍՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Վերջերս վարչապետ Զոհիլ Աբրահամյան այցելել է Կոտայքի մարզում գտնվող «Առողջ տուն» ՍՊ ընկերության արտադրամասեր: Վարչապետին ուղեկցել են ԶԳ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, ԶԳ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը, ԶԳ բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչության ներկայացուցիչները և այլք:

Վարչապետը նախ ծանոթացել է սևկի արտադրության գործընթացին, այնուհետև հուլիսի արտադրամասի կողմից մթնոլորտային օդի աղտոտման հետ կապված խնդրին: Կառավարության ղեկավարը գրուցել է հուլիսի արտադրամասին հարակից բնակավայրի բնակիչների հետ, լսել նրանց մտահոգություններն ու փաստարկները: Ընկերության ղեկավարությունը, իր հերթին, ներկայացրել է խնդրի լուծման ուղղությամբ կատարված և առաջիկայում նախատեսվող ծրագրերը: Նշվել է, որ արդեն մի քանի օր է, ինչ հուլիսի արտադրամասում ներդրվել են նոր տեխնոլոգիաներ, ինչի արդյունքում օդի աղտոտվածության հարցին տրվել է որոշակի լուծում:

Վարչապետը նշել է, որ եկել է արտադրամասեր՝ առկա խնդրին լուծումներ գտնելու համար: «Եթե արտադրամասում տեղադրվեն նոր ֆիլտրեր և տեղի հողը վերանա, ապա ընկերությունը կշարունակի իր գործունեությունը, քանի որ այստեղ աշխատում են նաև մի քանի տասնյակ քաղաքացիներ: Պետք է բնապահպանական նորմերը պահպանվեն: Առաջին խնդիրը սա է լինելու: Միևնույն



ժամանակ, մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի գարգանա սևկի արտադրությունը, ինչը կարևոր է նաև տնտեսության ակտիվության, արտահանման տեսակետից»:

ԶԳ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը նշել է, որ կարճ ժամանակ անց բոլոր խնդիրները կլուծվեն, և տեղի հողը կվերանա: Նրա խոսքով՝ ընկերությունն արդեն իսկ որոշակի ներդրումներ է կատարել, իսկ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում արտադրական տեխնոլոգիան ամբողջությամբ կփոխվի և իրավիճակը կկարգավորվի:

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Վարչապետ Զոհիլ Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ Զայաստանում ընթացիկ տարվա խաղողի մթերումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ, որին մասնակցել են շահագրգիռ գերատեսչությունների և մթերող ձեռնարկությունների ղեկավարները:

Վարչապետը, ողջունելով ներկաներին և անդրադառնալով 2015 թ. խաղողի մթերման կանխատեսվող ծավալին, նշել է, որ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությամբ, սպասվում է շուրջ 280.0 հազ. տոննա խաղողի համախառն բերք, որից՝ պետք է մթերվի 196.0 հազ. տոննա, սակայն պահանջարկը կազմում է 160.0 հազ. տոննա: Զոհիլ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը կարևորում է խաղողի մթերման գործընթացի ժամանակին ու սահուն կազմակերպումը և պատրաստ է աջակցել վերամշակող ընկերություններին՝ խաղողի լրացուցիչ քանակության մթերման խնդիրը լուծելու համար:

Այնուհետև ԶԳ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը գեղուցել է 2015 թ. խաղողի մթերումների կազմակերպման գործընթացի մասին և ներկայացրել խաղող վերամշակող ձեռնարկությունների հետ նախնական քննարկման արդյունքները: Գյուղնախարարը նշել է, որ վերամշակողները խաղողի լրացուցիչ քանակության մթերման նպատակով, հիմնականում բարձրացրել են շրջանառու միջոցների համալրման համար վարկային միջոցների տրամադրման հարցը: Մտքերի փոխանակության ընթացքում արժարժվել են վարկային միջոցների տրամադրման պայմաններին, ոռոգման գործընթացի կազմակերպմանը վերաբերող և այլ հարցեր: Վարչապետի հանձնարարությամբ, «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բադալյանը տեղեկացրել է, որ վարկավորումն իրականացվում է 5 տարի մարման ժամկետով, իսկ վարկի մարման արտոնյալ ժամկետը՝ մինչև մեկ տարի տևողությամբ է:

Վարչապետը, ամփոփելով քննարկումը, ընդգծել է, որ գործադիր կանխարժեքի հնարավոր ամեն ինչ, որպեսզի խաղողի բերքը չմնա գյուղացու մոտ, և վերամշակող գործարաններն ընդունեն այն: Զոհիլ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը, Կենտրոնական բանկի հետ համատեղ, կքննարկի և հետամուտ կլինի ֆինանսական ռեսուրսի տրամադրման հարցի լուծմանը:

ԱՆՏԱՌՆԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անտառի ազդեցությունը, բնական համակեցություններում ընթացող գործընթացների վրա, խիստ բազմազան է: Անտառային կենսահամակարգերը շար կարևոր են կենսոլորտում կյանքի պահպանման համար՝ դրանք մթնոլորտը հարստացնում են թթվածնով և կարգավորում դրանում ածխաթթու գազի պարունակությունը: Գոլորշացման արդյունքում, մթնոլորտ արտանետված ջրային գոլորշիների շնորհիվ, բարձրանում է օդի խոնավությունը, բարելավվում միջավայրի կլիման: Անտառները մեծ դեր են խաղում ջրի շրջապտույտի կարգավորման գործում: Անտառային հողերը ֆիլտրում են դաշտերից և արդյունաբերական շրջաններից հոսող ջրերը՝ մաքրելով դրանք վրանազավոր խոնավությունից: Անտառները, որպես հզոր հողապաշտպան գործոն, կորույս նվազեցնում են մակերեսային հոսքը և, հալոցքի ու անձրևաջրերի միջոցով, հողաշերտի լվացման գործընթացը: Անտառները հողերը հուսալիորեն պաշտպանում են քամու էրոզիայից:

րում առկա ածխածնի 92%-ը կուտակված է անտառային կենսահամակարգերում: Մնացած կենսահամակարգերի բույսերում այն կազմում է 7% և 1%-ը օվկիանոսային բուսատեսակներում: Մեծ քանակությամբ ածխածին կուտակված է նաև անտառային մետրանոց օրգանական նյութերում (դետրիտում), ինչպես նաև՝ հողերի հումուսում և տորֆային նստվածքներում:

Հասկանալի է, որ անտառային տարածքների ընդարձակումը, եթե չսեղանալի, ապա գոնե կղանդաղեցնի մթնոլորտում ածխածնի կուտակման գործընթացները:

Ցավոք, այժմ գոյություն ունի բոլորովին հակառակ գործընթացը և անտառային տարածքները կրճատվում են թե ՀՀ-ում, թե ամբողջ աշխարհում:

Անտառային էկոհամակարգերը Հայաստանում անհամաչափ են տեղաբաշխված: 62,5% անտառներ գտնվում են հյուսիս-արևելյան, 13,5%՝ կենտրոնական, 2,4%՝ հարավային և 21,6%՝ հարավ-արևելյան անտառատնտեսական մարզերում:

Հյուսիս-արևելյան անտառատնտեսական մարզում, կլիմայի փոփոխության կանխատեսվող սցենարների դեպքում, առավել խոցելի կլինեն



ԱՆՏԱՌՆԵՐԻ ԱՉՐԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏՆԻ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎՐԱ

Արդեն իսկ հաստատված է, որ մարդածին գործոններին զուգընթաց, վերջին տարիներին բնական կենսահամակարգերի վրա էական ազդեցություն է գործում նաև կլիմայի համընդհանուր փոփոխությունը: Այդ գործընթացը, որը նկատվել է դեռևս 20-րդ դարի կեսերից, արդեն իսկ արտահայտվում է՝ ինչպես բուսական և կենդանական աշխարհի վրա լրջորեն ազդող ծայրահեղ եղանակային, կլիմայական երևույթների և աղետների ավելի հաճախակի դրսևորումներով, այնպես էլ կլիմայի չորացմամբ: Ըստ կլիմայի փոփոխության, երկրագնդի մասշտաբով օդի միջին տարեկան ջերմաստիճանը, վերջին հարյուրամյակում բարձրացել է 0.6 °C-ով: Ջերմոցային գազերի արտանետումների ներկայիս չափերի պահպանման դեպքում, 21-րդ դարի ընթացքում այն կբարձրանա 3.0° C-ով:

Կլիմայի հետագա արդիականացումը հանգեցնելու է անապատացման ընթացքի ուժեղացմանը, որի հետևանքով մեծանալու է երաշտների հավանականությունը, հողերի էրոզացումը, նվազելու է բուսաբուծության և անասնապահության արտադրողականությունը և այլն:

Այդ տեսանկյունից, անտառային կենսահամակարգերը դիտվում են որպես ջերմոցային էֆեկտի ազդեցության չեզոքացման հիմնական միջոցներից մեկը: Հայտնի է, որ 1տ բուսազանգվածի (բացարձակ օդաչոր) առաջացման համար կապվում է 1.5-1.8 տ ածխաթթու գազ և արտազատվում 1.1-1.3 տ թթվածին: Այսպիսով՝ միջին արդյունավետության 1 հա անտառը կապում է մոտ 6-7 տ ածխաթթու գազ և արտազատում 5-6 տ թթվածին:

Ածխածնի մեծ քանակության կուտակումն անտառներում պայմանավորված է ծառուտի մեծ կենսազանգվածով: Ամբողջ աշխարհում բույսե-

ստորին լեռնային գոտու անտառները (550-1200 մ), հատկապես նրանք, որ աճում են հարավային լեռնալանջերին: Ներկայումս այս լանջերին տեղումների միջին տարեկան քանակը 600 մմ-ից չի անցնում, իսկ սպասվող կրճատումը կտրուկ ձևով կվատթարացնի անտառի աճման պայմանները: Արդյունքում՝ կբարդանա ինչպես անտառի բնական վերականգնումն ու տարեկան աճը, այնպես էլ՝ անտառային էկոհամակարգեր կթափանցեն տափաստանային և կիսաանապատային բույսերի տեսակներ. արդյունքում՝ այդ տարածքները լրիվ կանտառազրկվեն: Ըստ փորձագիտական գնահատումների (առանց հարմարվողականության միջոցառումների իրականացման)՝ մոտ 10 հազ. հա-ի վրա (անտառատնտեսական մարզի անտառների մոտ 5%-ը) անտառները կանհետանան:

Անտառային էկոհամակարգերում լուրջ փոփոխություններ չեն սպասվում 1200-1800 մ բարձրության վրա, քանի որ հենց այդ պայմաններում անտառներն ունեն հարմարվողականության ամենամեծ ներուժը, իսկ կլիմայական պայմանների փոփոխությունը գտնվում է անտառառաջացող հիմնական տեսակների էկոլոգիական ամպլիտուդի սահմաններում: Ջերմաստիճանի բարձրացման շնորհիվ, 1200-1800 մ բարձրության վրա, անտառային էկոհամակարգերում կբարելավվեն ինչպես բնական վերականգնման, այնպես էլ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների պայմանները: Ջերմաստիճանի բարձրացումը կնպաստի սերմերի ծլմանն ու տնկանյութի կաջողականությանը:

Շարունակելի...

Աղբյուր՝ Մարկոսյան «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակից, Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ԳՅՈՒՂԱՏՆԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԳՈՒԹԱՆԻ

Մեր թերթի վերջին համարներից մեկում հանգամանալից կերպով ներկայացվեցին հողապաշտպան ռեսուրսախնայող երկրագործության (<ՌԵ> սկզբունքները՝ հատուկ կանգ առնելով դրա ամենակարևոր բաղադրիչներից մեկի՝ անվար կամ ուղղակի ցանքի վրա: Նշվեց նաև, որ Շիրակի սևահողերում Գագիկ Մկրտչյանի գլխավորած Հայկական տեխնոլոգիական խումբը (<ՏԽ>) իր հմուտ մասնագետներով և դրանց շուրջը համախմբված առաջատար ֆերմերներով, վերջին տասնամյակում զգալի հաջողությունների են հասել, ինչնում համոզվեցին աշխատաժողովի մասնակիցները՝ դաշտային այցելությունների ընթացքում:

Նոր կառուցվող երկրագործության շուրջ, իհարկե, վեճեր են ծավալվում: Բայց եթե մի կողմ թողնենք թերահավատների կասկածամտությունը, գործընթացը սկսածների և նրանց հետևողների առջև խնդիրներ են ծագում, որոնք, ի դեպ, առաջինը տեսնում, ուրեմն և լուծում են գտնում ոչ թե թերահավատները, այլ արդեն ճանապարհ ընկածները: Այդ խնդիրներից առաջինը, թերևս, նույն բանը տարբեր տեղումներով անվանելն է կամ դրա հակառակը՝ տարբեր երևույթների կամ մոտեցումների համար նույն եզրույթ կիրառելը: Որից հետո արդեն, ըստ էության, հարց է ծագում, որ տալիս են շահագրգռված հողատերերը. Օ, թե մակերեսային վար, որ հողերի և որ մշակաբույսերի համար և ինչպես այն կիրառել: Ստորև բերված շարադրանքը հնարավոր մոտեցումների տարբերակների վերլուծությունն է՝ զարգացման մակարդակով և հնարավորինս մեթոդաբանական հենքով:

Վարից մասնակի, զգալիորեն կամ լրիվ հրաժարվելու որոշում կայացնելու վրա ազդեցություն կարող են ունենալ ամենատարբեր գործոնները՝ տնտեսության դիրքից, ցանքաշրջանառությունից/պտղափոխությունից սկսած և կլիմայով, երկրագործի գիտելիքներով ու հմտություններով, ընդհանուր տնտեսական պայմաններով ու քաղաքական որոշումներ ընդունելու կարողությամբ վերջացրած: Ծարժիչ ուժն այստեղ էլ բխված է. ռազմիկնալ մոտեցումները դրդում են նոր տեխնոլոգիաների ներդրումներ կատարել, որը կբերի, առաջին հերթին, արտադրական ծախսերի նվազեցման, իսկ ապա՝ նաև բերքատվության ավելացման, հուսալիության և կայունության բարձրացման:

Գույանից հրաժարվողները գրեթե միշտ նույն սխալն են թույլ տալիս. առաջին տարում առանց վարի խորը փխրեցնելով հողը, որն իմաստ ունի, քանի որ տարիներ շարունակ ծանր տեխնիկայով պնդեցված հողի ներքին հորիզոնը դրա կարիքն ունի, շարունակում են հետագայում էլ դա անել: Մինչդեռ պետք է թողնել, որ հողն ինքնիրեն ստրուկտուրացվի, հակառակ դեպքում՝ հայտնվում ենք նույն կախարդված շղթայում. գարնանը վարում ենք, աշնանը պնդանում է, գարնանը՝ կրկին վար: <ՌԵ> գլխավոր պատվիրաններից մեկի համաձայն՝ հողը ոչ թե փափուկ պետք է լինի, այլ ստրուկտուրացված: Ուրեմն՝ պարզապես պետք է տարեցտարի նվազեցնել փխրեցման խորությունն ու ինտենսիվությունը, որը հողի ֆիզիկական հատկությունների բարելավման հետ, բերում է գարնանային թեժ աշխատանքների ժամանակ վառելիքի և աշխատուժի տնտեսման: Այս ուղին ընտրածների համար թիրախային պետք է համարվի հողի ոչ ավելի, քան 10 սմ շերտը: Հակառակ դեպքում՝ շատ մշակաբույսերի համար (օրինակ՝ հլածուկի) չափից ավելի փխրեցված շերտը տափանում կպահանջի, ծանր տեխնիկան երկար պահպանվող հետքեր կթողնի, որը չի նպաստում օպտիմալ ռոտացմանը: Թերևս ավագային հողերի նկատմամբ, որոնք կավային բաղադրիչի գրեթե բացակայության պատճառով, համարյա զրկված են պլաստիկությունից, իսկ հումուսի և հողաբնակ միկ-

րոօրգանիզմների սակավության հետևանքով, բնութագրվում են թույլ արտահայտված դինամիկայով, փխրեցումից հրաժարվելու միտումը պետք է շատ կտրուկ չլինի, հատկապես հացահատիկային մշակաբույսերի համար:


Հատկապես վերջին տասնամյակի ընթացքում կուտակված փորձը, իսկ տասնամյակն այս դեպքում համարվում է փորձ ձեռք բերելու համար միանգամայն բավարար ժամկետ՝ թե հողի հավասարակշռության գալու, թե բավարար փորձ կուտակելու առումով, գալիս է հաստատելու, որ անվար ցանքը բարելավում է բառացիորեն բոլոր տեսակի հողերի ստրուկտուրացումը. հողի վարից ու հատկապես շրջումից հրաժարվելը միշտ ավելի ստրուկտուրացված շերտը պահում է վերևում, ինչի շնորհիվ տեղումներով եկած ջուրն ավելի արդյունավետ է օգտագործվում՝ անգամ ավագային հողերի պարագայում, եթե, իհարկե, բերքահավաքից մնացած ծղոտը հաջողվում է թողնել վերին շերտում:

Հողի հավասարակշռության գալու պարագան ունի համընդհանուր նշանակություն. դա օպտիմալ վիճակ է նրա արդյունավետության առումով, պայմանավորված լավագույն կենսաբանական, ֆիզիկական և քիմիական չափորոշիչներով, որոնք էլ բնորոշում են անգամ մասսատունների և հարուցիչների դեմ բույսերի դիմադրության մակարդակը: Ինչպես ցույց են տվել Գիսսենի (ԳԴՀ) համալսարանում իրականացրած հետազոտությունները, ինչպես հողում ընթացող բոլոր ֆիզիկական էֆեկտները, այնպես էլ ֆիտոպաթոգեն միկրոօրգանիզմների նկատմամբ մշակաբույսերի դիմադրողականությունը (ուսումնասիրվել են հացահատիկայինների ձնային բորբոսը (Microdochium nivale) և ցերկոսպորելեզային արմատային փտումը (Pseudocercospora herpotrichoides)) աճել են հողի ինտենսիվ մշակումից հրաժարվելու ժամկետների հետ համամասնորեն:

ՉՈ-ական թվականների հայտարարություններն այն մասին, որ նորագույն ագրոտեխնիկական մոտեցումները ոչ միշտ են բերում բերքատվության ավելացման, դրա կողմնակիցների մոտ ոչ թե խուճապ առաջացրեցին, այլ համառ ցանկություն հետազոտելու, թե որտեղ ինչ սխալ է թույլ տրվել, քանի որ, բնականաբար, նոր բնագավառում հմուտները սահմանափակ էին, փորձը սակավ: Այսինքն բացասական տեղեկատվության ճիշտ ընկալումը դրական արդյունք տվեց: Եվ այդպես կուտակվելով, տարբեր տեղանքների, կլիմաների, մշակաբույսերի, տարբեր մարդկանց կողմից ստացված մեկ տասնամյակից ավելի փորձը հնարավորություն տվեց որոշ ամփոփումներ և ընդհանրացումներ անել, որոնք, անշուշտ, օգտակար կլինեն հետևողների համար:

Գերմանիայում, որն առաջատար է այս բնագավառում, հազիվ թե գտնվի մի տնտեսություն, որն իր հողերի 100 %-ը վարում է: Ազգային դասակարգումով առաջին խումբը կազմում են այն տնտեսությունները, որոնք չեն վարում իրենց հողերի 30 %-ը: Սրանք, առաջին քայլերն անելով հանդերձ, զգուշավոր են և, սովորաբար, սահմանափակվում են նրանով, որ ոչ հացահատիկային մշակաբույսի բերքահավաքի մնացորդներով մուլչապատված դաշտում հացահատիկի ցանք են կատարում: Քանի որ որպես սկսնակ, բարեխղճորեն փխրեցում են կատարում, շահում են միայն վար չկատարելու հաշվին: Նաև ժամանակ են շահում և վայելում մուլչապատման հետ կապված առավելությունները:

Երկրորդ և երրորդ խմբերը կազմում են այն տնտեսությունները, որոնք իրենց հողերի 70-100 %-ը չեն վարում, բայց փխրեցումից ձերբազատվել դեռ չեն կարողանում: Սրանց օգուտն առաջին խմբի համե-



մատ, կայանում է նրանում, որ համեմատաբար փոքր օգուտն արդեն ստանում են բազմապատկած ավելի մեծ տարածքով: Բայց սրանք դեռ հեռու են ավելի շոշափելի հաջողություններից, քանի որ ընդամենը մի քանի տարի է, ինչ ցանքը մուլչապատված հողում են անում, իսկ դա հողի հավասարակշռության գալու համար բավարար չի: Ինչպես բավարար չի սնկային հիվանդությունների շոշափելի նահանջի համար, նիտրատների չվազման և խոնավության բավարար կուտակման համար:

Չորրորդ խմբի տնտեսություններն իրենց բոլոր հողերում նվազագույն փխրեցման աշխատանքներ են կատարում, իսկ հինգերորդ խմբինը՝ ուղղակի ցանք՝ առանց որևէ այլ միջամտության: Իհարկե, սա չի նշանակում, որ լրացուցիչ մուլչապատման հնարավորություն ունենալու դեպքում, նրանք դրանից կհրաժարվեն, քանի որ դրա առավելություններն ակնհայտ են: Հետաքրքրական է, որ այս սխեման գրեթե ունիվերսալ է և աշխատում է շատ երկրներում՝ հեռագիտեց հմտացնելով հողագործին և նախապատրաստելով առավելագույն արդյունքի: Այս առումով հետաքրքրական է ՀՏԽ փորձը, որն առավելագույն արդյունքի հասավ ավելի կտրուկ ուղի ընտրելով և իր կուտակված փորձով պատրաստ է այն երկրով մեկ տարածելու՝ պետական աջակցության պայմանով:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ անվար երկրագործության առջև արգելքներ չկան, հատկապես որ այն կիրառելի է գրեթե բոլոր հողերում և շրջանավոր բոլոր մշակաբույսերի համար: Աշխարհում գնալով աճում է այն տնտեսությունների թիվը, որոնք հրաժարվելով գույանից՝ ավելի բարձր բերք են ստանում՝ քիչ միջոցներ ծախսելով: Դրա հետ մեկտեղ, գնալով աճում է ՀՌԵ զինանոցը, արտադրվում է բազմաֆունկցիոնալ գյուղատնտեսական տեխնիկա: Եվ այս բոլորից հետո հողի նկատմամբ, ընդհանուր առմամբ, կարող է լինել 2 մոտեցում.

ա/ Ամեն տարի վարել՝ այսինքն քանդել հողի ուրույն կառուցվածքը, իսկ որպեսզի այդպիսի հողում հնարավոր լինի որևէ բան աճեցնել՝ պարարտացնելով այն: Բերքն այդքան շատ չի լինի, և պիտանելիության առումով՝ ոչ այնքան համեղ և օգտակար, եթե կիրառում ենք հանքային պարարտանյութեր: Օրգանական պարարտանյութերի դեպքում, բերքը մի քիչ ավելին կլինի և փոքր-ինչ ավելի համեղ, հողն ավելի դանդաղ կմեռնի, բայց միևնույն է, անընդհատ կորցնելու է իր կառուցվածքային կարգավիճակը:

բ/ Չվարել, միայն առաջին տարում խորը փխրեցում կատարել՝ պնդացված ենթավարային հորիզոնը ևս թուլացնելու համար և հեկտարին տալ 20-25 տոննա հնեցված գոմաղբ կամ 3,5-4,0 տոննա կենսահումուս, կամ 1,5-2,0 կգ հանրապետությունում արտադրվող ՄՄ բնական բակտերիալ պատրաստուկ՝ հետագայում փխրեցման խորությունը պահպանելով 0-10 սմ տիրույթում: Այդպիսի հողն անընդհատ բարելավելու է իր կառուցվածքը, որի շնորհիվ ոչ միայն աճելու է բերքի որակն ու քանակը, այլ արդեն երկրորդ տարում արտադրանքի ինքնարժեքը նվազելու է 1,5-2,0 անգամ: Յուրաքանչյուրն ազատ է այս երկուսի միջև ընտրություն կատարելու:

ԷԿՈԼՈՒՐ

ՏՆԿՎԵԼ Է ՇՈՒՐՁ 3.000.000 ԾԱՌ

«WWF-Յայաստանը վերջին մի քանի տարիների ընթացքում անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներ է իրականացրել 850 հեկտար տարածքի վրա, տնկել է շուրջ 3 միլիոն ծառ և ստեղծել հարյուրավոր ժամանակավոր աշխատատեղեր», - նշել է WWF-Յայաստանի անտառային ծրագրերի համակարգող Արթուր Ալավերդյանը:

Վերջին տարիներին երեք լայնածավալ ծրագրեր են իրականացվել WWF-Յայաստանի կողմից: Դրանք են՝ «Կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացումն անտառների լանդշաֆտների վերականգնման միջոցով», «Յարավային Կովկասի երկրներում, անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգի կայունության բարձրացումը

կլիմայի փոփոխության նկատմամբ», «Յուրուսիայի Յայաստանի անտառային լանդշաֆտի վերականգնում» ծրագրերը: Յամայնքների կողմից անտառի կողմնարդյունքի օգտագործման նպատակով, տնկվել են տասնյակ հազարավոր պտղատու ծառեր: Վերջին օրինակը՝ Թեչկանի ջրվեժի հարակից տարածքների անտառապատման ժամանակ մեր կողմից տնկվել է շուրջ 20.000 վայրի խնձորենի և տանձենի:

Ծրագրի համակարգողը հատուկ ուշադրություն է դարձրել էկոհամակարգային ծառայությունների մատուցմանը, նաև՝ մասնավոր և համայնքային անտառների ստեղծմանը: «Էկոհամակարգային ծառայությունների մատուցումը պետք է լինի անտա-

ռապատման, անտառվերականգնման նախագծերի կիզակետում: Պետք է զարգացնել անտառի սեփականության տարբեր ձևերը: Բացի պետական սեփականությունից, մենք պետք է փորձենք զարգացնել նաև համայնքային սեփականության անտառները: Յակնակալով վտանգները՝ բոլոր դեպքերում, այդ գործընթացը պետք է շարունակել: Եթե այն չիրագործվի, կունենանք լուրջ խնդիրներ, քանի որ պետական ֆինանսավորման շրջանակներում, մոտակա տասնյակ տարիների ընթացքում հնարավոր չի լինելու անտառային ոլորտն ապահովել բավարար միջոցներով: Միակ ընդունելի տարբերակը՝ մասնավոր և համայնքային անտառների համակարգի զարգացումն է», - նշել է Արթուր Ալավերդյանը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՑՎՈՒՄ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սյունիքի մարզի «Սերգեյ-Դավիթ» ՍՊԸ-ն, որը զբաղվում է 40 հա գյուղատնտեսական հողատարածքների մշակությամբ, նախատեսել է ավելացնել ցանքատարածքները: Բազմաճյուղ այս տնտեսությունում, նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ, աստիճանաբար բարձրացվում է գյուղատնտեսության վարման արդյունավետությունը:

Տնտեսության տնօրեն Կարինե Մինասյանի պահանջկոտ ու հետևողական աշխատանքի արդյունքում, Տեղ գյուղում գտնվող այս տնտեսությունը դրական ցուցանիշներ է արձանագրում: Ընկերությունը զբաղվում է պտղատու ծառատեսակների տնկիների արտադրությամբ, ինչպես նաև՝ պտղատու այգու և ծնեբեկի մշակությամբ: Զբաղվածության ուղղություններից մեկն էլ հացահատիկային և բազմամյա խոտաբույսերի (հիմնականում՝ կորնգան) սերմնաբուծությունն է: Ընկերության գյուղատնտես Սամվել Դավթյանի տեղեկացմամբ, նախկին ավանդական, ցածր արդյունավետություն ունեցող պտղաբուծությունից անցել են աշխարհի շատ երկրներում տարածում գտած ինտենսիվ պտղաբուծության: Այսպես, օրինակ՝ արտադրում են թզուկային և ցածրածառատեսակների տնկիներ, որոնց պահանջարկն օրեցօր մեծանում է հանրապետությունում: Այդ ծառատեսակներն աչքի են ընկնում բարձր բերքատվությամբ, բացի այդ, հեշտությամբ է կատարվում բերքահավաքը: Ի դեպ, արտադրում են նաև ցածրած ընկուզենիներ, որոնք բերքի տակ են մտնում 5-րդ տարում: Առավելություններից մեկն էլ այն է, որ մեկ ծաղկակաղթունի վրա կարող է լինել քառասուն ծաղիկ, որից պտղի են վերածվում մինչև տասնհինգը: Տնտեսության յուրահատուկ ուղղություններից մեկն էլ՝ դեկորատիվ ծառատեսակների տնկիների արտադրությունն է:



Տնտեսության 1.7 հա հողատարածք տրամադրվել է ծնեբեկի մշակությանը (Հայաստանում զանգվածային ծնեբեկ արտադրող միակ տնտեսությունն է): Ստացված բերքը առաքում են Ռուսաստանի Դաշնություն, հիմնականում՝ Մոսկվա: Ելնելով պահանջարկից՝ առաջիկայում նախատեսել են ևս մեկ հեկտարով ավելացնել վերջինիս ցանքատարածքները: Ծրագրել են կազմակերպել նաև մեծ պահանջարկ վայելող սպիտակ ծնեբեկի արտադրություն: Ինչ վերաբերում է այս բուսատեսակի օգտակարությանն ու բուժական նշանակությանը, ապա բավական է ասել, որ վերջինս իր մեջ պարունակող K վիտամինի շնորհիվ, վերացնում է տրոմբալիսի գոյացությունները: Ծնեբեկը պարունակում է մարդու օրգանիզմի համար մեծ նշանակություն ունեցող այլ վիտամիններ ևս: «Սկզբում դժվար էր իրականացնել ծնեբեկի վաճառքը, քանի որ բնակչությունը ծանոթ չէր այդ բուսատեսակին, չգիտեին նաև պատրաստման տեխնոլոգիան: Տարիների ընթացքում հաղթահարվեցին դժվարությունները: Հիմա արդեն իրացման խնդիրներ չունենք»,- ասում է Սամվել Դավթյանը:



Տնտեսությունում ընդգրկված են սեզոնային 10 աշխատող: Իսկ ընդհանրապես, հիմնականում աշխատում են ընտանիքի 4 անդամները՝ Կարինե Մինասյանը և Սամվել Դավթյանը՝ Սերգեյ և Դավիթ որդիների հետ միասին: Ֆերմերային տնտեսությունն ապահովված է անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայով: Ծնեբեկի բերքատվության բարձր ցուցանիշներ ստանալու համար կիրառում են արտերկրի, մասնավորապես՝ Հոլանդիայի փորձը: Այդ նպատակով իրականացվում են մասնագիտական փոխայցեր, փորձի փոխանակում, կազմակերպվում են ուսուցողական սեմինարներ: «Գյուղատնտեսական արդյունավետության բարձրացման համար բանկերը պետք է վարկեր տրամադրեն ցածր տոկոսադրույքներով: Տնկիներ կարող են վաճառել 3-րդ տարում, մինչդեռ բանկին վճարում են վարկը վերցնելուց հետո՝ հաջորդ ամսում, երբ որևէ եկամուտ դեռևս չունեն: Կուզենայի տրամադրելի արտոնյալ վարկեր: Այդ դեպքում կընդլայնեմք արտադրությունը, կիջներ արտադրանքի ինքնարժեքը»,- հավելում է Սամվել Դավթյանը: Նրա կարծիքով՝ տնկիների արտադրությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների համար արտոնյալ պայմանների ստեղծումը կնպաստի նաև մեր երկրում այգեգործության զարգացմանը: «Ինձ համար կարևորը շուկայի առկայությունն է: Եթե ես ունեն ապրանք, որը չեմ կարող իրացնել, դա նույնն է՝ թե ոչինչ չունեն»,- եզրահանգում է ֆերմերը: Իսկ իրացման խնդիրների կարգավորման գործընթացում նա կարևորում է պետպատվերի առկայության անհրաժեշտությունը:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԵՂԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՑ ՄԵՂՐՈՎ ՄԵՂԱՅԱՑԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼԸ ԵՎ ՔԱՄԵԼԸ

Գլխավոր մեղրաբերքի նախօրյակին, մեղվապահը նախապատրաստում է մեղր քամելու գործիքները՝ սերեկ կտրելու դանակները, սերեկի սեղանը, մեղրաքամը, մեղր լցնելու զանազան ամաններ, դույլեր և այլն: Մեղր քամելու համար փեթակից վերցնում են այն մեղրահացերը, որոնց բջիջները լցված են մեղրով, և 1/3ը սերեկված է: Չի կարելի սպասել, որ մեղուներն ամբողջությամբ սերեկեն մեղրով լցված բոլոր բջիջները:



Մեղրաքամ էլեկտրական

Ազատ բջիջների բացակայությունը բացասաբար է անդրադառնում մեղրաբերքի վրա: Ազատ տարածություն չլինելու պատճառով, մեղվանոցը զրկվում է հսկայական քանակությամբ մեղրից: Այսպես, օրինակ՝ օրական 3,5 կգ մեղրաբերքի պայմաններում միևնույն մեղվանոցի հավասար ուժի մեղվաընտանիքները, որոնք տեղավորված են եղել կշեռքի վրա, մեղրահացերի ազատ բջիջներ չունենալու պատճառով, յուրաքանչյուրը հավաքել է ընդամենը 200 գ մեղրաբերք: Եթե մեղվանոցն ապահովված է բավարար քանակությամբ դատարկ մեղրահացերով, ապա՝ մեղրաքամի համար վերցրած մեղրով շրջանակների փոխարեն, տալիս են դատարկները, եթե այդպիսիները չկան, մեղրաքամից հետո փեթակ են վերադարձնում դատարկվածները:

Մեղվաընտանիքներից մեղրով շրջանակներն առանձնացնելիս,

մեղրով լցված մեղրահացերը չեն կտրվում: Հատկապես զգուշությամբ պետք է քամել նոր կառուցված մեղրահացերի մեղրը: Այդ նպատակով սկզբում կիսով չափ քամում են մեղրահացի մեկ կողմի՝ երեսի վրա եղած մեղրը, այնուհետև՝ մյուս կողմինը՝ լրիվ չափով, որից հետո լրիվ քամում են առաջին երեսինը:

Սերեկ կտրելու դանակը պետք է լինի տաք վիճակում, այդ նպատակով մի քանի դանակներ դնում են ջրով լցված

Սերեկ կտրելու դանակները

ավանդական	շոգեդանակ / паровой /	

դրանց վրայի մեղուները հեռացնում են թափ տալու միջոցով: Եթե մեղուներ են մնում, ապա երկար քիստերով, փափուկ խոզանակով հեռացնում են: Մեղրահացերը տեղավորում են փոխադրական արկղի կամ հարկի մեջ, վրան փռում կտորից խոնավ ծածկոց, փոխադրում մեղրաքամի: Մեղրաքամ մեքենայի մեջ, մեղրահացերը տեղավորելուց առաջ, սերեկի դանակի օգնությամբ, կնքված բջիջների սերեկը հեռացնում են: Մեղրաքամի մեջ մեղրահացերը տեղավորում են այնպես, որպեսզի շրջանակի վերին լուծը համընկնի կասետների ամրացման կողին: Բացի դրանից, հատուկ ուշադրություն պետք է դարձնել մեղրաքամի մեջ հավասար ծանրությամբ մեղրոտ շրջանակների դասավորմանը: Իրար դիմաց գտնվող կասետների մեջ պետք է տեղավորեն մոտավորապես հավասար կշռով մեղրահացեր, որպեսզի մեղրաքամը հավասարակշռված լինի և պտտման ժամանակ չտատանվի: Մեղրաքամի բռնակը պտտում են այնպես, որպեսզի մեղրահացերի ձողիկներն ուղղված լինեն մեղրաքամի թմբուկի շարժընթացին:

ամանի մեջ, որն անընդհատ տաքացվում է: Գոլորշիով տաքացվող դանակներով սերեկ կտրելն ավելի հեշտ է: Դանակի միջով անցնող գոլորշու շնորհիվ, այն միշտ տաք վիճակում է լինում: Բաքը, որի մեջ գոլորշի է առաջանում, սովորաբար տեղավորում են մեղրաքամի սենյակից դուրս՝ գազօջախի կամ տաքացման այլ աղբյուրի վրա: Ռետինե խողովակի ծայրը, որտեղից դուրս է գալիս գոլորշին, դանակը տաքացնելուց հետո նույնպես սենյակից դուրս են հանում կամ զգուշացնում ջրով լցված դույլի մեջ, որպեսզի մեղրաքամի սենյակը չտաքանա:


Մեղրաքամը պետք է նախօրոք տեղադրել պատվանդանի վրա և ամրացնել: Մեղրաքամից մեղրը հեշտությամբ դատարկելու համար պատվանդանը պատրաստում են այնպես, որպեսզի մեղրաքամի ծորակը բացելիս, մեղրն անմիջապես լցվի համապատասխան ամանի մեջ:

Մեղրաքամի ծորակից կախում են գոհիչ ցանցը՝ մեղրի մեջ եղած մոմի մանր կտորները և կողմնակի խառնուրդները հեռացնելու համար: Հաջորդ օրը հավաքում են մեղրի երեսին կուտակված մանր խառնուրդները և փրփուրը:

# ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՑ ՄԵՂՐՈՎ ՄԵՂՎԱՅԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳՆԵԼԸ ԵՎ ԲԱՍԵԼԸ

6

Մեղրով մեղրահացերը փեթակից հանում են օրվա տաք ժամերին, երբ թռչող աշխատավոր մեղուներին մեծ մասը դրսում գրադված է նեկտար հավաքելով: Եթե մեղրով մեղրահացերը լրիվ հարկն են գրադեցնում, և անհրաժեշտ է ամբողջությամբ վերցնել, ապա մեղրահացերի վրա եղած մեղուների հեռացնելը բավականին դժվարանում է: Որոշ մեղվապահներ, մեղրաքամից հետո քամված մեղրահացերը վերադարձնում են մեղվաընտանիքներին: Խորհուրդ է տրվում այդ գործողությունը կատարել զարնանք՝ բերել լայնացնելիս, քանի որ դա բավականին լավ է անդրադառնում մեղվաընտանիքների զարգացման վրա:



Մեղուների աշխատանքը

Հաջորդ տարվա բավարար զարգացումը և ընտանիքի ուժը կախված է կերի քանակից ու որակից, որը ընթացիկ տարում առանձնացվել է գլխավոր մեղրաբերքի ժամանակ: Լավորակ կերի առատ պաշարի դեպքում, ընտանիքները բարենպաստ են անցկացնում ձմեռումը և գարնանը լավ են զարգանում: Կախված տեղի բնակլիմայական պայմաններից՝ ձմռան երկարատևությունից և մեղվի ուժից, յուրաքանչյուր մեղվաընտանիքին պետք է թողնվի 18 կգ-ից ոչ պակաս կերապաշար: Պաշարային մեղրի մի մասը կարելի է փոխարինել շաքարով: Պաշարային մեղրի փոխարինումը շաքարով, տնտեսական և զոոտեխնիկական տեսակետից, նպատակահարմար է շաքարը մեղրից եռակի էժան է, բացի այդ, բնական մանանայի մեղրի (եթե այդպիսին կա կերապաշարում) մի մասի փոխարինումը շաքարով բարերար ազդեցություն է թողնում մեղուների վրա: Հայտնի է, որ մանանայի մեղրով սնվելիս ձմեռող մեղուների մոտ ուժեղ փորլուծ է առաջանում, որի հետևանքով շատ մեղուներ են ոչնչանում, իսկ պաշարի մեջ մանանայի մեծ քանակը հաճախ մեղվաընտանիքների կործանման պատճառ է դառնում: Եթե այդ միջոցառումը այս կամ այն պատճառով չի կատարվել, ապա ձմռան կերապաշարի համար առանձնացված մեղրով մեղրահացերը խնամքով պահում են մինչև աշուն և այն օգտագործում բերել ձմեռմանը նախապատրաստելիս: Բացի դրանից, հարկավոր է յուրաքանչյուր ընտանիքի համար 12 մեղրով մեղրահաց պահեստավորել զարնան համար, ընդ որում, մեղրով լցված բջիջները պետք է լինեն կնքված, որպեսզի ձմռանը մեղրը չջրիկանա ու չթթվի: Կարևոր է, որ կերապաշարի համար առանձնացված մեղրահացերի մեջ լինեն ծաղկափոշով մեղրահացեր: Կերային մեղրի առանձնացումն ավելի հեշտ է կատարվում, երբ մեղվաընտանիքները պահվում են բազմա-հարկ փեթակներում: Դրա համար գլխավոր մեղրաբերքի ժամանակ, այն հարկը, որի մեղրահացերի բջիջների մեծ մասը մեղրով լցված ու կնքված է, առանձնացնում են ու պահեստավորում: Պետք է գիտենալ, որ եթե մեղվանոցը ամռան երկրորդ կեսին և աշնանը գտնվում է անտառների, գանազան թփերի, ուռենու ծառերի մոտ, ապա կերի պաշարում չի բացառվում մանանայի մեղրի առկայությունը: Այդպիսի դեպքում որոշում են մեղրի մեջ մանանայի առկայությունը, եթե հայտնաբերվում է, կիրառում են վերը նշված միջոցառումներից որևէ մեկը:



Մեղրի անջատումը շրջանակից

Նորակ Հակոբյան, կենսաբանական գիտ. թեկնածու  
Կարեն Ավետիսյան, գյուղատնտեսական գիտ. թեկնածու  
«Մուլտի Ագրո» գիտաարտադրական կենտրոն

## ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

### ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՍԱԴԻՐՈՂ ԵՆ

«Եթե ուզում ես հաջողության հասնել գյուղական համայնքում, շատ կարևոր է, որպեսզի մարդիկ վստահեն քեզ: Այստեղ ամեն ինչ երևում է, ոչինչ չես թաքցնի», - ասում է Սարիգյուղի կանանց կոոպերատիվի անդամ Մարինե Մանուչարյանը:



Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում տարիներ առաջ, կանանց նախաձեռնությամբ, ստեղծվեց սպառողական կոոպերատիվ, որի նպատակը՝ համախմբված գործունեության իրականացումն էր, խնդիրների համատեղ լուծումը: Այնուհետև, Օքսֆամ միջազգային կազմակերպությունը, որը իրականացնում է «Հայաստանում տնտեսական արդարություն» ծրագիրը, խթանելով կայուն կենսապահովման հնարավորությունները, աջակցեց գյուղատնտեսական կոոպերատիվի հետագա գործունեությանը: Այժմ արդեն ձևավորվել է կայուն կոոպերատիվ տնտեսություն:

Մինչև ամուսնանալը, Մարինեն ապրում էր Իջևանում: Ավարտելով Մանկավարժական ինստիտուտը՝ դասավանդում էր դպրոցում: Այժմ բնակվում է Սարիգյուղում, աշխատում է տարրական դասարանների ուսուցչուհի, միաժամանակ կանանց կոոպերատիվի ակտիվ անդամներից է: «Աշխատանքը կոոպերատիվում բերում է եկամուտ: Կյանքն ինքն է թելադրում նոր կանոններ: Հիմա, երբ տղամարդկանց մեծամասնությունը, աշխատանք որոնելու նպատակով, ստիպված մեկնում է գյուղից, ընտանիքի պատասխանատվությունը կանայք վերցնում են իրենց ուսերին: Ելնելով իմ փորձից՝ կարող եմ ասել, որ նրանք հաճախ ոչնչով չեն զիջում ամուսիններին, նույնիսկ բարձրացնում են տնտեսությունների վարման արդյունավետությունը», - նշում է Մարինեն:



այլև՝ ամբողջ համայնքի համար», - հավելում է Մարինեն:

Նելլի Սահակյան

## ՀԱՍՍԱՅՆՔԱՅԻՆ

### ԼՈՒԾՎՈՒՄ Է ՈՌՈՔՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանն այսօր «Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի գրասենյակի» ղեկավար Ա. Շահբազյանի, Սյունիք և Աճառան գյուղական համայնքի ղեկավարների, և պաշտոնատար այլ անձանց հետ այցելել է Սյունիք գյուղական համայնք, որտեղ ավարտվել են ոռոգման ջրագծի վերականգնման աշխատանքները:

տարվա ընթացքում ոռոգման խնդիր չի ունենա» խոստմանը, օրերս հերթական շրջայց է կատարել ոռոգման համակարգում ջրամատակարարման ընթացքին, ինչպես նաև տեղերում իրականացվող մասնակի վերանորոգման աշխատանքներին ծանոթանալու նպատակով: Մարզի ղեկավարն այցը սկսել է Մխչյան առաջին և Մխչյան երկրորդ պոմպակայաններից:

Ջրագծի վերականգնումն իրականացվել է ՄԱԿ-ի շարժաքանակի ծրագրի «Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի» և «Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի գրասենյակի» ծրագրի շրջանակում, որի նպատակն է՝ մարզի Սյունիք և Աճառան գյուղական համայնքներում ոռոգման ջրագծերի վերանորոգման միջոցով, հողերի դեգրադացիայի կանխարգելումն ու բնակչության անվտանգ գյուղմթերքի ապահովումը: Իրականացվել են 4 կմ ջրանցքի վերականգնման աշխատանքներ, որի արդյունքում ջրանցք է մտնում վարկյանում մոտ 240 լ ջուր:

Առաջին պոմպակայանում մարզպետը ծանոթացել է պոմպակայանի մղման խողովակաշարի՝ 1800 մմ տրամագծով վթարված խողովակի վերանորոգման աշխատանքներին: Երկրորդ պոմպակայանում ավարտին էին մոտենում 1600 կվտ հզորությամբ շարժիչի, ինչպես նաև նույն մղման խողովակաշարի կոնդենսատորների վերանորոգման աշխատանքները:

Փոխմարզպետը կարևորել է ջրատարի վերանորոգումը և նշել, որ այն հնարավորություն կտա կանխելու ոռոգման նպատակով Արծվանիկի պոչամբարի ջրերի օգտագործումը: Այցի ավարտին՝ Կապանի «Օրիոս» բնապահպանական կենտրոնում տեղի է ունեցել քննարկում՝ վերոնշյալ ծրագրերի հետագա համագործակցության վերաբերյալ:

Մարզպետը, տեսնելով աշխատանքի ոչ մեծ ծավալները, հորդորել է «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ Գագիկ Վարդանյանին՝ ապահովել լիարժեք ջրամատակարարում: «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի Ազատի ջրամբարի կարգավորիչ ավազանի հաստ փականի վերանորոգմամբ, կվերականգնվի Արտաշատ և Դվին ջրանցքերի, ինչպես նաև՝ Ազատի քառաստիճան պոմպակայանների կանոնավոր ջրամատակարարումը:

\*\*\*  
Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, հավատարիմ մնալով վաղ գարնանը հողագործների տված՝ «գյուղացին ամբողջ

Շրջայցի ավարտին, Արտաշատի ջրանցքի մաքրման աշխատանքներին ծանոթանալուց հետո, Ռ. Աբրահամյանը զրուցել է նաև Վեդի ՏՕԸ-ի ղեկավար Մարտին Առաքելյանի հետ և բոլոր պատասխանատուներին հանձնարարել է մինչև օրվա վերջ ապահովել լիարժեք ջրամատակարարում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊԸ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II Ծրագիր Արժեշտների Զարգացման մրցույթ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊԸ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II Ծրագիրը, որի բաղադրիչներից է «Արժեշտների զարգացումը» (ԱԾԶ): Արժեշտների զարգացման ուղղված ենթածրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ենթածրագրերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

ԱԾԶ Բաղադրիչի նպատակը.

ԱԾԶ բաղադրիչի հիմնական նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշտային այլ մասնակիցներին՝ արտադրանքի որակական ցուցանիշների, ներքին շուկայի պահանջարկի, սննդամթերքի անվտանգության պահանջների բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալների ավելացման հարցերում:

Իրավասու հայտարարումներ

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի և սննդի վերամշակման ձեռնարկություններին (բացառությամբ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների), որոնք ներգրավված են ընտրված արժեշտների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

Իրավասու հայտատուներից (վերամշակող ձեռնարկություններ և այլն) առաջնահերթություն կստանան այն հայտատուները, որոնք ենթածրագրերի իրականացման ընթացքում լայնածավալ համագործակցություն (պայմանագրային հիմունքներով) կնախատեսեն մեծ թվով ֆերմերային տնտեսությունների հետ:

Նպատակային ֆինանսավորման ուղղությունները.

ԱԾԶ բաղադրիչի շրջանակներում շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորման գումարները կարող են օգտագործվել ստորև նշված ծախսերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

1. Նոր սարքավորումների ձեռքբերման ծախսեր, այդ թվում՝ արտադրության, հետբերքահավաքային մշակման, պահեստավորման, պահպանման, լաբորատոր, վերամշակման, փաթեթավորման, տեսակավորման, որակի վերահսկողության և այլն,
2. Տեխնոլոգիական վերագինման նպատակով սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
3. Սննդի անվտանգության կառավարման համակարգերի ներդրման և սերտիֆիկացման ծառայությունների (միջազգային կազմակերպությունների կողմից) ձեռքբերման ծախսեր ( HACCP, ISO, օրգանական արտադրության, պատշաճ արտադրական գործունեության և այլ հարակից տեխնիկական աջակցություն):
4. Շուկայավարման և բրենդինգի ծառայությունների (ներառյալ՝ առևտրային նշանի, արտադրանքի արտաքին տեսքի մշակման, փաթեթավորման և այլն) ձեռքբերման ծախսեր:
5. Բոլոր տեսակի բարձրարժեք մրգերի և հատապտուղների նոր սորտերի տնկիների ձեռքբերման ծախսեր:
6. Տեխնիկական աջակցության, մասնագիտական տեխնիկական և շուկայավարման (հատկապես՝ արտադրանքի արտահանման խթանման վերաբերյալ) խորհրդատվության ձեռքբերման ծախսեր:

ԱԾԶ բաղադրիչի շրջանակներում չեն կարող ֆինանսավորվել՝

- նախքան նպատակային ֆինանսավորման (դրամաշնորհային) համաձայնագրի կնքումը կատարված որևէ ձեռքբերման ծախսեր
- բնապահպանական առումով վտանգավոր և շրջակա միջավայրի վրա անվերականգնելի բացասական ազդեցություն ունեցող ակտիվների ձեռքբերման ծախսեր,
- բացասական սոցիալական ազդեցության ունեցող կամ տարաբնակեցման ռիսկեր պարունակող ակտիվների ձեռքբերման ծախսեր,
- շինությունների և հողատարածքների ձեռքբերման և վարձակալության ծախսեր:
- շինարարական աշխատանքների իրականացման ծախսեր: Եթե անհ-

րաժեշտ է իրականացնել վերանորոգման որոշակի աշխատանքներ՝ կապված սննդի անվտանգության համակարգերի ներդրման հետ, ապա դրանք կարող են ֆինանսավորվել շահառուների կողմից կատարվող ենթածրագրի համաֆինանսավորման միջոցներով.

- հումքի և շրջանառու միջոցների ձեռքբերման ծախսեր,
- աշխատանքի վարձատրության և փոխհատուցման ծախսեր,
- հարկերը և այլ բյուջետային վճարումները,
- սարքավորումների վերանորոգման ծախսեր,
- կոմբայնների ձեռքբերման ծախսեր:

Ներկայացվող պահանջները

Հայտատուի կողմից ներկայացվող Հայտ-դիմումները և Բիզնես-հայտերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- Առաջարկվող ենթածրագրի տևողությունը չպետք է գերազանցի 24 (քսանչորս) ամիսը,
- Ենթածրագրի նպատակային ֆինանսավորման գումարը պետք է լինի նվազագույնը 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 50,000 ԱՄՆ դոլար,
- ԱԾԶ Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է շահառուի կողմից իրականացնել ենթածրագրերի համաֆինանսավորում՝ ենթածրագրի իրականացման բյուջեի առնվազն 50%-ի չափով:
- Շահառուների կողմից ենթածրագրերը պետք է համաֆինանսավորվեն ֆինանսական միջոցներով. ոչ ֆինանսական ակտիվների (հող, անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, աշխատանք և այլն) ներդրումը ԱԾԶ Բաղադրիչի կողմից չի համարվում համաֆինանսավորում: Համաֆինանսավորում է համարվում շահառուի կողմից իրականացվող բացառապես ֆինանսական ներդրումը:
- Հայտատուն չի կարող մեկ անգամից ավել ստանալ ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում:
- Ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում չի հատկացվում այն հայտատուներին, որոնք նախկինում անհաջողության են մատնել կամ ձախուղել են որևէ ծրագիր:

Հայտ-Դիմումների ընդունում

Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) իրենց կողմից պատրաստված Հայտ-Դիմումները և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման Գրասենյակ» ՊԸ-ի ԱԾԶ քարտուղարություն (ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 54 բ.) մինչև 31.08.2015թ., ժամը 18:00:

Հայտ-Դիմումները պատրաստում և ներկայացնում են հավակնորդ սննդի արժեշտային մասնակիցները՝ իրենց ղեկավարի ստորագրությամբ: Վերջնաժամկետից հետո ներկայացված Հայտ-Դիմումները ենթակա չեն ընդունման ԱԾԶ քարտուղարության կողմից: Էլեկտրոնային փոստով և ֆաքսով ուղարկված Հայտ-Դիմումներն ենթակա չեն ընդունման:

Ծանուցում

Ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

ԱԾԶ Բաղադրիչի գործունեության և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման Գրասենյակ» ՊԸ-ի ԱԾԶ քարտուղարության աշխատակազմը պոստեղիպ հավակնորդների համար կկազմակերպի աշխատաժողով՝ կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողների, վերամշակողների և արժեշտային այլ մասնակիցների համար, 27.08.2015թ., ժամը 12:00

հասցե ՀՀ ք. Երևան, Արգիշտիի փող., 7-րդ շենք «Մոսկովյան մշակութաֆորձարարական կենտրոն «Դոմ Մոսկվի» Երևանում»:

Փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ.

Հայտ-Դիմումների պաշտոնական ձևաչափի լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման Գրասենյակ» ՊԸ-ից

Էլեկտրոնային փոստ - info@arspiu.com  
Համացանցի կայքէջ - www.arspiu.com,  
Հեռախոս 29-73-01; 29-73-02; 29-73-03

ՀԵՏԱԲՈՒՔԻՐ Է...

ԱՄԵՆ ԻՆՉ ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Եգիպտացորենի սունակներում հայտնաբերվել են ճարպային, եթերային յուղեր, խեժեր, դառը գլիկոզիդներ, սապոնիններ, ասկորբինաթթու, K վիտամին, կարոտինոիդներ, գլիկոկինիններ, սիտոստերոլ, ստիգմաստերոլ: Հատիկները պարունակում են 61% օսլա, 6% ճարպայուղ, B1, B2, B6 վիտամիններ, հանքային նյութեր՝ K, Ca, P, Mg, Fe և այլն:

Եգիպտացորենը հացազգիների ընտանիքին պատկանող մշակովի, միամյա խոտաբույս է: Եգիպտացորեն մշակել են դեռևս հնագույն ժամանակներում՝ Մեքսիկայի տարածքում: Եվրոպայում եգիպտացորենը հայտնվել է Զրիստափոր Կոլումբոսի շնորհիվ: Վերջինս Հարավային Ամերիկա կատարած ճանապարհորդությունից վերադառնալով՝ Իսպանիայի թագավորին նվիրեց այնտեղից բերված եգիպտացորենը: Ընդամենը 30 տարի պահանջվեց, որպեսզի այս բույսը տարածում գտնի Պորտուգալիայից մինչև Չինաստան, իսկ 70 տարի անց այն գրավեց ամբողջ աշխարհը:

տագործել նաև սակավարյունության, սրտային կամ երիկամային անբավարարության հետևանքով առաջացած այտուցների դեպքում: Բուժման արդյունքում խթանվում է լեղու արտազատումը, փոփոխվում է նրա որակական կազմը, նվազում են լեղու մածուցիկությունն ու բիլիռուբինի պարունակությունը: Սունակները հատկապես արդյունավետ են լեղու թերարտազատության դեպքում:

Եգիպտացորենի սունակները միզաքարային հիվանդության,



միզուղիների բորբոքային հիվանդությունների, շագանակագեղձի բորբոքման, այտուցների դեպքում օգտագործում են որպես միզամուղ միջոց, ինչպես նաև՝ տարբեր բնույթի արյունահոսությունների ժամանակ: Եգիպտացորենում պարունակվող գլիկոկինինները կարգավորում են ածխաջրատային փոխանակությունը, որի շնորհիվ կարգավորվում է արյան մեջ շաքարի պարունակությունը, իսկ ֆիտոհեմագլուտինիններն օժտված են հակաուռուցքային ազդեցությամբ. փորձագիտական տվյալներով, մանրացրած հատիկների հստակ արգելակում է ուռուցքային բջիջների աճը:

Լյարդի բորբոքումների ժամանակ օգտակար է կես տարվա ընթացքում խմել եգիպտացորենի սունակներից պատրաստված թեյ, իսկ աղիքային հիվանդությունների դեպքում՝ եգիպտացորենի խոշոր աղացած ալյուրից պատրաստված եփուկը. օրը 2-3 անգամ, 1 ճաշի գդալ, ուտելուց առաջ:

Ջրոնիկական հեպատիտի՝ լյարդաբորբի ժամանակավոր մեղմացման կամ ռեմիսիայի ժամանակ օգտակար է եգիպտացորենի սունակներից պատրաստված ջրաթուրմը՝ մեկ ճաշի գդալ սունակը 1 ժամ թրմել 1 բաժակ եռացրած ջրում, քամել, խմել 1 ճաշի գդալ, 3 ժամը մեկ: Նույն նպատակով կարելի է օգտագործել նաև եգիպտացորենի ձեթը: Զաղցած վիճակում օրական խմել 1 ճաշի գդալ եգիպտացորենի ձեթ, որը կնպաստի լեղու արտազատմանը, արյան շիճուկում խլելստերինի քանակի նվազմանը, լեղապարկի ֆունկցիայի բարելավմանը, աթերոսկլերոզի կանխարգելմանն ու բուժմանը:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ԱԶՆՎԱՄՈՐԻ

Պահպանվել են հիշատակություններ այն մասին, որ Կրիտոս կղզու բնակիչները ազնվամորու հատապտուղները հավաքել են Ջևաի հայրենիքը համարվող Իդա լեռան լանջերից:

Ազնվամորին (Rubus idaeus, малина) վարդագգինների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է: Կյանքի առաջին տարում ցողունները խոտային են, բարակ՝ ծածկված սուր փշերով: Աշնանը ցողունները փայտանում են, իսկ հաջորդ տարվա գարնանը՝ ճյուղավորվում և կորցնում են փշերը: Տերևաթափ, մինչև 1,5-2 մ բարձրության հասնող թուփ (կամ կիսաթուփ) է: Տերևները կազմված են կենտ քանակության (3,5 կամ 7 հատ) անհավասար, սղոցաեզր տերևներից, որոնք մուգ կանաչ են, սրածայր, ներքևից սպիտակ, թաղիքանման: Պտղաբերող ընձյուղների վրա տերևները եռանաս են, և հենց այս տերևներից ստացած պատրաստուկներն են առավել օգտակար: Ծաղիկները սպիտակ են՝ մինչև 1 սմ տրամագծով, հավաքված ոչ մեծ վահանաձև հուրաններում՝ ցողունի և ճյուղերի գագաթներին: Պտուղը հովիս-օգոստոս ամիսներին հասունացող բազմակորիզակ է:

Ազնվամորին մեղրատու բույս է, ծաղկման շրջանը տևում է 15-18 օր: Ծաղիկները թեքված են դեպի ներքև, ինչի շնորհիվ մեղուն կարողանում է «աշխատել», նույնիսկ անձրևոտ եղանակին: Մեկ օրվա ընթացքում ուժեղ մեղվաընտանիքը կարող է մթերել մինչև 3 կգ ծաղկախյութ և 200 գ ծաղկափոշի. 1 հա ազնվամորու հոծ թփուտների մեղրատվությունը հասնում է մինչև 215 կգ: Մեղրն ունի բաց սաթի գույն, հաճելի համ և բուրմունք: Բյուրեղանում է երկրորդ տարում՝ ստանալով կրեմագույն երանգ:

Ազնվամորին հանդիպում է Նիզ-Ապարանի, Վայքի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Ախուրյան գետի վերին հոսանքների լեռնային գոտիների անտառներում, թփուտներում, քարքարոտ վայրերում, անտառների հատած տեղերում և եզրերին: 16-րդ դարից մշակվել է Եվրոպայում, մեր օրերում ունի մեծ տնտեսական նշանակություն, արտահանման ծավալներով առաջատարը ՌԴ-ն է: Սերբիան զիջում է՝ 2, իսկ ԱՄՆ-ը՝ 3 անգամ: Ռուսաստանում մշակվել են տեսակներ, որոնք պտղաբերում են առաջին տարվա աշնանը: Հատապտուղները հարուստ են օգտակար նյութերով. թարմ պտուղը պարունակում է 5,7-9 տոկոս շաքարներ, 2-3 տոկոս օրգանական թթուներ՝ կիտրոնի, խնձորի, գինու, մրջնի, սալիցիլի, ֆլավոններ, դաբաղանյութ, 5-6 տոկոս բջջանք, պեկտին, վիտամիններ, մակրո և միկրոտարրեր: Գրեթե նույնանման նյութեր են պարունակում ծաղիկներն ու տերևները: Սերմը պարունակում է մինչև 12 տոկոս ճարպային թթուներ և բետա-սիտոստերին:

Բնական ասպիրին

Գիտական բժշկությունը խորհուրդ է տալիս ընդգրկել սննդակարգում ազնվամորու



թարմ և չորացրած պտուղները կամ դրանցից ստացված մթերքը աղետամոքսային համակարգի հիվանդությունների դեպքում, քանի որ դրանք լավացնում են մարսողությունը, ունեն հակաբորբոքային, ցավազրկող հատկություններ, սրտխառնոցը կանխարգելող ազդեցություն: Չոր պտուղներում բարձր է սալիցիլաթթվի տեսակարար կշիռը, դրանցից ստացված թեյը համարվում է քրտնամուղ, ջերմիջեցնող դեղամիջոց, որը խորհուրդ է տրվում մրսածության դեպքում: Չոր պտուղները կարող են փոխարինել ասպիրինին: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ազնվամորին նպաստում է ինսուլինի գոյացմանը և յուրացմանը հյուսվածքներում:

Հայտնի է, որ մարդու օրգանիզմը պետք է ստանա օրվա ընթացքում որոշակի քանակությամբ վիտամիններ, միկրո և մակրոտարրեր: Այլ հայտնի մրգերից և բանջարեղենից ստացված հյութերի համեմատությամբ, ազնվամորին պարունակում է ավելի մեծ քանակությամբ մարգանտեց և ցինկ, պղնձի, երկաթի և E վիտամինի բաղադրությամբ զիջում է միայն սև հաղարջենուն:

Հոլիզաուդ: Հյութը կարող է ունենալ ալերգիկ ազդեցություն, առաջացնել այտուցվածություն, քոր, ալերգիկ ցան՝ մաշկի վրա: Կան ազնվամորու ենթատեսակներ, որոնք ունեն դեղին կամ մուգ կարմիր գույնի հատապտուղներ: Դեղին ազնվամորին ալերգիա չի առաջացնում, դրա մեջ ավելի շատ է բետակարոտինը (1,5 անգամ): Այս տեսակն ունի հակաուռուցքային հատկություն:

Հիշողության կորուստ

Վերջին տարիներին ԱՄՆ-ի գիտնականներն ապացուցել են, որ սև հապալասը, մոշը, ազնվամորին, գետնամորի անտառայինը և դրա մշակովի տեսակը՝ ելակը, կանխարգելում են ուղեղի ծերացումը: Պարզվել է, որ հատապտուղներն ակտիվացնում են միկրոգլիա կոչվող հատուկ բջիջները, որոնք լուծում և հեռացնում են հիշողության կորուստ առաջացնող թունավոր սպիտակուցները:

Հեղինակները կարծում են, որ նման հատկությունը բնորոշվում է հատապտուղում պարունակվող ճարպային թթուների և բետա-սիտոստերինի ազդեցությամբ: Սիտոստերինը հակազդում է խոլեստերինի առաջացմանը: Ազնվամորին ամրացնում է արյունատար անոթների պատերը, խորհուրդ է տրվում ընդգրկել ինսուլին և ինֆարկտ տարած մարդկանց սննդակարգում:

Advertisement for Agronews magazine. Includes text: 'ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱԳՐՈ Լրատու թերթի 2015 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ' and subscription rates for 1, 6, and 12 issues.